ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, ԵՐՈՒՍԱՂԵՄ.
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Յ. ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, ՍՏԱՄԲՈՒԼ.
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ԲԵՅՐՈՒԹ.
ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ:

Սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս.

Նոր տարվո սեմին սուրբ մտածումներով և սպասումներով կդիմավորենք մեր Տիրոջ և Փրկչի Ծննդյան տոնը և աստվածակառույց Իջման տեղեն՝ Ս. Էջմիածնեն, Ձեզի կբերենք մեծ ավետիսը երկնային՝

«ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:

Խաղաղությո՜ւն Ձեզի և Ձեր եկեղեցիներուն, և համայն մեր հավատացյալ ժողովուրդին: Խաղաղությո՜ւն Ձեր ասպնջական բարի երկրին ու ժողովուրդին, խաղաղությո՜ւն ամբողջ աշխարհին, բոլոր ազգերուն:

«Մտիկ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո, Տէ՛ր» (Սաղմ, ՃԽԱ 2):

Ս. Ծննդյան աստվածառաք պատգամը թող առավել խոր արմատներ արձակե մարդոց և ժողովուրդներու սրտերեն ներս, և 1962 տարին թող դառնա լույսի նոր սյուն մը՝ մարդկությունը դեպի խաղաղություն և երջանկություն տանող:

Այս աղոթքը Մեր շրթներուն, Լուսավորչի Ս. Աթոռեն կօրհնենք Ձեզ, արժանապատիվ հոգևոր հովիվները, թեմական-եկեղեցական վարչությանց հարգարժան անդամները և մեծահարգ երեսփոխաններն ու խորհրդականները, եկեղեցանվեր տիկնանց, երիտասարդաց միությանց անդամները և դպրաց դասերը, ազգային-մշակութային, հայրենասիրական և բարեսիրական կազմակերպությանց անդամները, հայկական վարժարաններու և կիրակնօրյա դպրոցներու ազնիվ մշակները և սիրասուն աշակերտները, ինչպես և մանավանդ Մեր բոլոր հավատացյալ և հարազատ զավակները, մաղթելով ամենուդ արևշատ տարիներ՝ քաջառողջությամբ և առաքինի գործերու հաջողությամբ:

Եվ «Դուք, եղբարք, մի՛ ձանձրանայք զբարիս գործել», «Եւ ինքն Տէր խաղաղութեանց տացէ Ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ և յամենայն իրս» (Բ Թեսաղ. Գ 14, 16):

ՇՆՈՐՀԱՎՈ՜Ր ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ:

Հայրապետական օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյույորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգաոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի հանձնախմբի նախագահ պր. Եր-

վանդ Աղանանյանին (Նյու-Յորք), Աբգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Բեյրութ), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին. Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի բարեբարերին և ծանոթ ազգային դեմքերին:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Վամանոի և Ս. Ծննդյան տոներուն առթիվ փոխադարձաբար կներկայացնենք իմ և Սրբոց Հակոբյանց միաբանության անունով մեր սրտագին շնորհավորությունները և կաղաչենք ամենակարող Աստուծո, որ Ձերդ Սրբության շնորհեն բազում քաջառողջ և երջանիկ տարիներ հաջողություններով լեցուն, և անսասանություն ու բարգավաճում մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐԵՎԱՆ

Ս. Ծննդյան տոնին առթիվ բոլորիս անունով կշնորհավորենք Վեհը և կառաջնորդենք մեր ուղիական սիրը: Մարդացյալ Փրկիչը աշխարհին խաղաղություն ու Վեհիդ երկար տարիներ պարգևե:

ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ

ՍՏԱՄԲՈՒԼ

Մեր Փրկիչն Հիսուսի Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության տոնին առիթով ջերմագին շնորհավորություններ և բարեմաղթություններ Ձերդ Վեհափառության թանկագին կենաց և Աթոռի բարեզարդության:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲԵՅՐՈՒԹ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ, ամենաջերմ և ճարտարի զգացմունքներով գրված, արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերից, տեմակալ առաջնորդներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: